Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ԴԱՀՆԱԳԻՐ

## ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՍԻՐՈՑ

ԵՒ

## ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

---

ԴՐԵԱՏ

ԵՂԻՇԷ ԴՊԻՐ ԵՒ ՎԱՐԺԱՊԵՏ ՄԵԾԱՏՈՒՆԵԱՆՑ

---

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՅԻԳ — 1874

Սերեբ
698

Վերջ ա՛ր.
698
2009

# ԴԱՀՆԱԳԻՐ

## ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՍՒՐՈՑ

ԵՒ

## ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

---

ԱԵԹԱՏԱՍԻՐԵԱՑ

514

ԵՂԻՇԷ ԴՊԻՐ ԵՒ ՎԱՐԺԱՊԵՏ ՄԵԾԱՏՈՒՆԵԱՆՑ



Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

---

ՌՅԻԳ—1874

# ԳԱՐԵՆԻՆ

## ՑՈՂՄ ՄԱՐՄԱՐԱՎՈՐՈՒԹԵՍՆ

ԵՒ

## ՄԱՅՐՈՒՄՆԱՎՈՐ

ՀՐԱՄԱՆԱՒ

**Տ Տ ԳԷՈՐԳԵԱՅ Դ**

ՎԵՀԱՓԱՌԵՒ ԱԶԳԱՍԷԷՐ ԿԱՌՈՒՑԷԱՆՍԷ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ·

698-2009

(4173
41)

693

## ԳԱՀՆԱԳԻՐ

### ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՍԻՐՈՅ ԵՒ ՄԻԱՒԱՆՈՒԹԵԱՆ·

«Ամենայն Թագաւորութիւն եւ տուն բաժանեալ յանձն՝ կործանի եւ աւերի»։ (Աւետարան)։

Եւ յիրաւի, ի Կարնոյ գաղթեալ Ախալցխոյ քաղաքի պատուական Հայ հասարակութիւնը, ինչ որ էր մեր գաղափարաց և զգացմանց մէջ, այնպէս էր նաև գրեթէ ուրիշ քաղաքի թէ հեռաւոր, և թէ մերձաւոր մեր Ազգայնոց սրտի և հոգւոյ զգացման, ճանաչողութեան, ըմբռնման և ընտրութեան մէջ· սակայն կցաւիմ, կպժգամ, ու կը դարշիմ ասել, որ մի քանի չարանախանձ մարդկանց ոխն և ատելութիւնն ու ժանտախտն երկար ժամանակէ ի վեր, այս մեր ազնիւ ու սիրելի ժողովրդեան սուրբն ալ, անսուրբն ալ, թէ՝ իրաւացին, և թէ անիրաւն, յիրար խառնելով, պրծցեց, խռովեց, աւերեց, վրդովեց, և տակն ու վրայ ըրաւ նոցա խաղաղութիւնն և հանգիստը, այնպէս որ, այժմ, այն ամէն

պարծանաց և պատուոյ շնորհքներէն, վայելքներէն և արդիւնքներէն զրկուած՝ սոսկալի խռովութեան, հարստահարութեան, թշնամութեան, տգիտութեան, տանջամութեան և ամբարշտութեան տեսարան մը, թատեր մը դարձած է. բայց ինչպէս որ կկարծեմ, իհարկէ, պէտք է ընտրել, ու գտնել, և ցուցանել հրապարակաւ, թէ ո՞վ է եղած արդեօք աս ամէն չարեաց և թըշուառութեանց ծնողն և սկզբնապատճառը, և անշուշտ հարկաւոր է հրապարակական բեմին վրայ բերել այնպիսի անամօթներն, և թէ անոնց յարող ու ռամիկներէն գովաբանուիլ ուզող ծանծաղամիտներն, մանաւանդ մի քանի խենէշ և անճոռնի, փտած, ժանգռոտած և ծթռած գրիչներ. սակայն, վեհանձնութիւնն և խոհեմութիւնն կհարկէ զիս լռել հոս, և չըյիշել նոցա խայտառակութիւնները, և մերկութիւննին երևան չհանել, որովհետև մեր նպատակէն դուրս է միութեան և սիրոյ այն յաւիտենական բարոյականութիւնը հալածել, որ է մեր Կենարար վարդապետին Յիսուսի անսուտ խօսքը, թէ "Ամենայն թագաւորութիւն և տուն բաժա-



նեալ յանձն՝ կործանի և աւերի,,: Ասոր համար ընդհանրական դիտմամբ կդառնամք այն ամենայն խռովութեան և չարեաց բուն պատճառն, և թէ ներկայ և ապագայ վընասների հետևանքներն իրենց աչքի առաջևն դնել, իրենց ցաւերուն դեղ և դարման ցուցնել, և ազգակործան ատելութեան առջևն առնելու նպատակաւ, քանի մը խօսք ասել, յորդորելով զիրենք ի սէր և ի միութիւն:

Շատ ժամանակէ ի վեր խորհրդաղգածլռութեամբ դէտային աչքերնուս դրած կըդիտէի Ալաշկերտ քաղաքի մեր ազգայնոց մէջ ծագած խռովութեանց և այլ և այլ վատ կրից պարագայներն, և անոնց մթին մասեր, ուստի զինքն և զԱզգը ճանչցող ձայնը կենդանի և զօրաւոր ու ընտանեկան շունչ կշնչէ իւր ազգային մարմնոյ այս մէկ մասին, սորա այժմեան ողորմելի դրից մէջ, որ լռած, լքած, պաղած ու թմրած ինկած է անզգայութեամբ բարոյական և մըտաւորական վերքերու և հիւանդութեանց մէջ:—Այս ամէնուն պատճառն, երկու և երեք իրական առարկայներն եղած են:— Նախ՝ Եկեղեցական և երեսփոխանական

հաշուապահանչութիւնն. — երկրորդ՝ ու-
սուցչական ընտրութիւնն. — և երրորդ՝ Կա-
բապետեան ու Եղիսաբեթեան Դպրոցնե-
րու վիճակներն, և Եկեղեցական դրամոց
. . . . . ծախսելն:

Բայց ինչպէս վերը խօսեցանք, հիմայ
այս բոլոր եղելութեանց վերայ մանրամաս-
նաբար քննելու, դատելու և գրելոյ ժա-
մանակ և կամք չունենալով՝ և վերս ի վե-
րայ վերաց դնել չունելով՝ զգաստութեան,
ողջմտութեան, և բարոյական կենդանու-
թեան խրատ մը, պայման մը, և միաբա-
նութեան և սիրոյ հրաւէր մը կուտամ ձեզ,
որ դուք՝ Ալեքսանդրացի Հայեր, իբրև ի Քրի-
ստոս ծնեալ նոր ժողովուրդ, և նոր ա-
բարածներ, իբրև Հայկայ, Արամայ, Արայի
և Տրդատայ, Գրիգորի, Մեսրովբայ, Խո-
րենայ, Սահակայ և Եղիշեայ որդիք, և երկ-
նաւոր Հօր Որդւոյն Յիսուսի Քրիստոսի և
երկրորդ Լուսաւորչի քրտինքովն ու ար-
եամբը ներկուած ու սրբուած համահաւա-
քեալ ժողովուրդք, Աստուծոյ և եղբօր և
ընկերոջ սիրով լեցուած կենդանի սիրտեր՝
մէկդի թողնելով վրէժխնդրութիւնն և ա-
տելութիւնը, իրարու ձեռք երկնցնել, սիրտ



սրտի տալ, անկեղծութեամբ և հաւատար-
մութեամբ զիրեար եղբայրաբար ողջունել
և ընդդրկել. և այսպէս, ապականեալ ձեռ-
քերնուդ բորբոքեալ բոցը, և թէ անոնց
մրուրը Աղգային և կրօնական հոգւով՝ Քրը-
իստոսի սիրովը, և նորա փրկարար կողէն
ցողած արեամբն մարել, ջնջել և սրբացու-
ցանել, և այնուհետև Աղգաշէնութեան բա-
րոյական հանդէսներ բանալ. ձեր Դպրո-
ցաց բարեկարգութեան և յառաջդիմացու-
թեան վերայ խորհել, և Եկեղեցւոյ շինու-
թեան և պայծառութեան վրայ հոգալ և
տքնել, ապա թէ ոչ՝ այդպիսի անարդ
կիրքերով և մոլորութիւններով թունաւո-
րուած՝ փոխանակ զարգանալոյ, ծաղկելոյ և
փթթելոյ, երթալով երթալով՝ օրէ օր կը
գօսանաք և կփոքիք, և զանազան փորձու-
թեանց կենթարկուիք, ու կենթարկէք ձեր
ներկայ և ապագայ սերնդոց: — Ձեզ մոա-
ծեր, որ այս անսիրելութեան հոգին էր, որ
մեր բազմադարեան Աղգը, այն հսկայաձև
ահագին լեռներէ աւելի հզօր և հաստա-
տուն մարմինը, այսպէս ակարացուց, քայ-
քայեց և հիմնայատակ կործանեց, այնպէս
որ այժմս, ինչպէս մի փոքր և դողդոջ ծիլ

մը կաղնիին քով՝ այնպէս է մեր Ազգային լրութիւնն ալ ուրիշ Ազգաց մօտ. չքընեմք մարդկութեան ներքին կատարելութիւննիս:

Արիք ուրեմն, մէկդի թողումք, թէ հոգևորապէս, և թէ բարոյապէս, մեր անձնական կիրքերն, մեր հաճոյքներ, մեր գոռոզութիւն և նենգութիւննիս, շահասիրութեան և շողոքորթութեան պժգալի և գարշելի հոգին, որպէս և փառամոլութեան և ինքնահաւանութեան ծրարներն ծոցերնէս, սրտերնէս հանենք, ու հրապարակական անաչառ բեմին վերայ ընդհանրութեան աչքի առջև պատառենք ոչնչացուցենք, և յաւիտենական նզովքով դատապարտութիւն համարիմք մեզ համար այսուհետև կիրք և ատելութիւն բանեցնել իրարու դէմ, այս և այն Ազգային գործի մէջ, և մանաւանդ հպարտացեալ և փքոյց և ուռոյց խօսքերով, առանց իրական արժանաւորութեան, զմեզ՝ բարձր բարձր և փայլուն փայլուն ածականներով մտաւորական և նիւթական կարողութիւններէս վեր գործքերու և պաշտօններու ձգտեցուցանել. ասալ անանկ մի պակասութիւն մին է, որ



թէ հոգորին, և թէ տկարին, թէ գիտնականին, և թէ տգէտին, և մինչև անգամ յետին աղքատ ստրկին, հաւասարապէս և միօրինակ ամօթ ու նախատինք կբերէ. զոր եթէ մերժեմք, բարոյք կանեմք, օգուտ շատ կբաղեմք. իսկ եթէ ընդունիմք և սիրեմք զայն, վնաս կանենք, և զեան մեծ կբերեմք անկէ: Այսպիսի շշոտիելի և զգալի խնդրոյ մը վերայ մի քանի տողայամիտ ու թեթևասօլիկ, խենէշ և անճոռնի գրիչներ, դեռ իրենք իրենց անկարեկից, և բարոյական առաքինութենէ զուրկ, ցամքած ու չորցած, փոխանակ Ազգայի մերայնոց թէ հարուստներուն, և թէ առհասարակ ժողովրդականաց սիրտն ու հոգին դէպ ի միութիւն, դէպ ի Աւետարանին պանծալի սէրն ու խաղաղութիւնը հրաւիրելու, ձգելու, փոխանակ Ազգայնութեան և Ազգասիրութեան հոգին արծարծելու և զօրացուցնելու, և փոխանակ ճշմարտութիւնն խօսելոյ, իրենք եղան՝ որ ստութեան, խաբեբայութեան, անիրաւութեան և անզգամութեան պաշտպան ու քարոզիչ հանդիսանալով, եթէ տեղ տեղ ալ յօդակապութեան սերտութիւն մը՝ միութիւն մը

կար նէ՝ զանիկ ալ կուրօրէն և անբարոյապէս քանդեցին և ապականեցին. ահաւասիկ, դու հիմայ ել, և բարոյական աշխարհին մէջ մտնելու և Ազգայնութեան հոգին իւր թանձր ու խոր ննջմանէն զարթեցնելու, և լուսաւորութիւն, սէր և միութիւն ծաւալել տալու փոյթն և եռանդ ունեցող մարդ ընտրէ ու դտիր մեր քաղաքի մէջ. անոնցմէ մէկն ալ ես եմ. բայց իմ ուզածս, սիրածս և ցանկացածս այս է միայն — որով իմ վշտակիր հոգին պիտի ուրախանայ և զօրանայ. — ազատ կամքով, ազատ քննութեամբ և Ազգասիրական մաքուր խղճիւ, և քրիստոնէական սիրոյ ներքին ազդեցութեամբ մը տեսնել ըզհամազգի սիրելիս Աիսաղլխոյ Հայ հասարակութեան միաբանական երջանիկ կենաց՝ եղբայրսիրութեան և խաղաղութեան վիճակին մէջ. որով և յայնժամ, իրենց ամենակարևոր խնդիրն ոչն է, զայն դիւրաւ կարող կըլլան յառաջ տանել, ծաղկեցնել և պտղաբերել։—

Ցաւալի զարմանք մին ալ այս է, որ մեր գաղթական ժողովրդեան ընտանեկան բուն հոգւոյն և միաբանութեան մէջ՝ օտար երկրացի, ուրիշ կիրքերէ ապականուած երկուծուռ և մոլար սիրտեր, — անհատ Հայ անձինքներ մտած են այս օրերս, որ հասարակաց բարիքը ինչ է՝ Ազգի համար ծառայելն ինչպէս և կամ ոչպիսի պարագայներով կը լինի, դեռ չգիտեն. Հայոց ալֆաֆէտը — այբուբենն դեռ նոր աւարտած՝ գլուխնին ծաղրածու գովեստներով և զրոներով միայն լեցուն, իրենց անձին շահը միմիայն մտմտացող, բարոյական առաքինութիւնը մոռցող և միանգամայն զուրկ անկէ, միտքերը խռովեալ, տեսութիւններին կարճ ու մեգապատ, ասոր և անոր՝ իրարու վրայ կցուցանեն, եւելոք ռամկին. զանազան անհիմն և անտեղի կասկածներ, ճըշմարտութեան պատրուակաւ, մեծ մեծ ու շահասիրական ատութիւններ, ատելութիւն, անզգամութիւն, և միմեանց դէմ վրէժ կուտան շնչել այս և այն լրագիրներէն. ուստի արժան է մեզ այստեղ վայրկեան մը կանգ առնելով և քանի մը տող լռութեամբ և ելմ խօսելով . . . . . յորդոր կարդալ այդ Ազգային պարտուց և իրաւանց ընդդէմ գործող և զայն չճանաչող, նորա յարգն ու արժանաւորութիւնն և

կշռոը չորոշող մեծիմաստ պարոններուն, որ սանձահարեն իրենց ապիկար լեզուն և բոլոտած գրիչներն, և մեզ ևս տեղիք չտան ուրիշ անգամ ի սէր ճշմարտութեան, գրիչնիս բացարձակօրէն իրենց նման ողորմելի մերկիմաստակներու վերայ դարձուցնել ըստ ամենայն հանգամանացն:

Հայ գաղթական ժողովուրդը՝ ի գաղթականութենէ անտի մինչև ցայսօր, այսպիսի խռովայոյզ, այսպիսի ավասալի և ցաւալի տկարութեան և բանադրանքի շանթերու և կսկիծներու հանդիպած չէր. աւաղ, որ այս կորստական ճանապարհին և վիճակի մէջ մէկ մը չկայ՝ որ իւր աչքն դէպի անցեալը դարձուցնել յօժարի, և պահ մին ալ դէպ ի ներկայս, ու տեսնէ, քննէ կշռադատէ և հասկնայ այն ամենայն աւերմունքը . . . . և . . . նիւթապէս կրած մեծամեծ վնասներն, զորս մենք մեր ձեռօք արինք, և ապա այս աղէտալի հետևանաց վերայ մարդկային և կրօնական տրամաբանութեամբ մը դեղեցիկ և հզօր խորհրդածութիւն մը անեն՝ աս ցաւերուն և կապոյտ կապոյտ վէրքերուն դեղ և դարման տանելու հնար գտնեն:



Երբեմն, մեր մէջ հեռատես, կենցաղագէտ, եղբայրասէր, բարեպաշտ և երկիւղած մարդիկ շատ կային, այժմ ո՞ւր մնացին նոքա, ի՞նչ եղան, չե՛մ գիտեր: Երբեմն մեր մէջ՝ Թադէոսի, Լուսաւորչի, Սեսրովբայ, Սահակայ, Գրիգորի, Ներսէսի, Աբրիստակեայ, Խորենայ նման միաբանութիւն, սէր սերմանող մշակներ ևս շատ կըգտնուէին, այժմ ինչո՞ւ համար արդեօք Հայութեան այս բարոյական և քաղաքական կեանքը նորոգող, կենսագործող և անմահացուցանող վսեմ զգացմունքն և ըսկզբունքը և ազգին, ու թէ Ազգային այս մէկ մասին գոյութիւնը պահպանող միակ միջոցը, և դանիկ յարատևող կապը և խաբիսկը բոլորովին քանի՛ գնաց քայ քայեցաւ, և աշխարհաւեր կատաղի կրից և նախանձուալիքներուն մատնուեցաւ: Այս խնդրոյս վերայ երկու կողմէն ալ պատասխան մը կըսեմք, այնպէս որ ո՛չ մէկին, և ո՛չ միւսին մեղադրելու իրաւունք չեմք կարող ունենալու:

Միաբանութեան սրբազան մշակներու այժմեան փոխանորդներն կասեն որ, յիրաւցընէ, թէպէտ և ի ներկայումս մեր հո-

յանկապ նախնիքն իրաք չկան մեր մէջ, սա-
կայն, նոցա քրտինքովն մեծցած ու զար-
գացած աշակերտներս մեք, դեռ ևս կամք,
և ամէն տեսակ երկպառակութեան բա-
ժանմանց միաբանութեան հնար և ճարը
կընամք գտնել. թէպէտև մեզանից շատ
քչերն կգտնուին որ ժառանգական ըրած
են միաբանութեան այս վսեմ հոգին, բայց
ի՞նչ օգուտ կասեն, որ՝ ազգ, ժողովուրդ
չկան, երկիր չըկայ մեր միաբանութեան
սերմեր ցանելու, խոպանացել և անմշակ է
երկիրը.—ժողովրդեան սիրտը: Ա՛ի՛ս մասը
կպատասխանէ. թէ կան ազգ, և ժողո-
վուրդ, կան երկիրներ միաբանութեան հուն-
տեր սերմանուելու, թէպէտև անխոպան և
մշակեալ երկիր քիչ կը գտնուին.—Ազգի
և ժողովրդեան բարեզգած և քաղաքա-
կիրթ սիրտը և ախորժակը, և բարոյական
շնորհաց ներընդունիչ հոգին. միայն թէ
ափսո՜ս, որ մինչ ցարդ միաբանութեան
ժրաջան մշակներն ալ որոնք են նէ՝ աշխար-
հաւեր եսականութիւնն և սնապարծու-
թիւնը մէկդի թողած չեն:

Կարճ և կոյր մտքեր, վայրենաբարոյ և
վայրահաչ ռամիկներ, բժոտած, ու տգի-



տութեան խաւարով մթնցած աչքեր, ինչ-
պէս կամին՝ թող այնպէս տրամադրին,
ինչպէս որ կախորժեն՝ թո՛ղ այնպէս կար-
դան և հասկանան իմ գրուածներն՝ բայց
հեռատես և լուսաւոր մտքերու, կրթեալ և
կենցաղագէտ ազնիւ մարդիկներու, չեմ
զլխանիր ծուռ գաղափարով ըմբռնել, և
իւրեանց հոգւոյ զգացմանց մէջ անօրինակ
և անհարազատ կերպով տարբացուցանել:

Ո՞ր յիմար մարդը, կամ ո՞ր խելացի ու
կրթեալ անձը, և կամ ո՞ր հասարակու-
թիւնը օգուտ քաղել չակնկալէ . . . .
. . . . . Դպրոցներէ թէ
այժմ, և թէ ապագային, քանի՛ որ սէրն
ու միաբանութիւնը մէջերնիս հաստատուած
չէ, քանի՛ որ իրարու դէմ կասկած,
հակառակութիւն, ատելութիւն, վրէժ ու
քէն կժայթքեմք. ո՛վ կուզէ թող երազէ
ու մարգարէանայ ասոնցմէ յառաջադի-
մութեան և լուսաւորութեան հանդէսներ
տեսնալ. ըստ մեզ անհնարին է՝ մինչդեռ
այսպիսի բաժանման և կողմնակցութեան
մէջ կը գտնուիմք Ա.խալցխացի Հայերս, և
որոց վախճանը վատ է և սոսկալի: Յու-
սով եմ, որ ամէն ճշմարիտ Հայեր պիտի

հաճին, և մեզ հետ համոզուած ըլլալու են, որ առանց միաբանութեան՝ Ազգաշէնութիւն և կամ բարոյական և մտաւորական զարգացումն ունենալ կարող չեն երբէք։

Կաղաչեմ զձեզ, սիրելի հայրենակիցք իմ, մի՛ խաբուիք և մի՛ հաւատաք այն խաբեբայ երիտասարդներուն, որոնք անամօթաբար, իրենց փորերնուն համար ասդիս անդին ինկած նենգութիւն և խաբեբայութիւն և ամբարտաւանութիւն սերմանելէն իզատ ուրիշ բան չանին։ բայց, իմ ձեզանէ պահանջածս ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ հասարակաց միաբանութեան և ապահովութեան միտ դնել, հասարակաց բարիքը մըտածել և Կարապետեան ու Ղազիսաբէթեան Դպրոցի հոգւոյն և մարմնոյն վերքերն ու խոցերը պատելու և բժշկելու հնարն գտնել։

Ամիկայ պարզ փիլիսոփայութիւն մին է, որ բնութիւնը և Աստուած, ոչ թէ միայն ինձ և Թորոսին, հապա ամէնուդ ալ առհասարակ սիրտը և գլուխը և մարմինը և հոգին իրարմէ անբաժան է ստեղծեր, աչք տուել է անոնց նա և տեսնելու համար, ականջ տուեր է լսելու համար, սիրտ տը-



ուել է զգալու համար, ձեռք տուել է գործելու, ոտք տուել է քալելու համար, միտք տուել է խորհելու, ընտրելու, դատելու համար, և կամք է տուեր ճշմարիտն ու սուտը, բարին ու չարն որոշելու և ի գործ դնելու համար։ բայց մի՞թէ մարդս այս աստուածապարգև ազատ շնորհն ունենալով իրեն մարդկային սրբազան պարտքն և իրաւունքն ու կատարելութիւնը չճանչնայ պիտի, անզգայութեամբ պիտի ապրի, և տմարդութիւն և անզգամութիւն պիտի գործէ։ Երկրորդ՝ այս անգամոց միաբան գործակցութեամբ իւր մարդկային յատկութիւններն ի գործ դնելու է, թէ՝ բաժանեալ և անմիաբան կերպով։ օրինակի համար, կարող է արդեօք մարդս աչքով տեսածն ալ անել, եթէ ձեռքը չլինի, կամ չշարժի, ականջով լսածը ուրիշներուն պատմէ, եթէ լեզուն չլինի, կամ չբարբառի, կրնայ արդեօք զգալ, եթէ սիրտը չլինի, կամ խորհի ու ընտրէ, եթէ հոգին չունենայ, կամ չախորժի։ ոչ ապաքէն ասոնք ամէնը լրիւ ունենալու է։ այնպէս է նաև ազգն, թէ իբրև հոգևոր և բարոյական մարմին։ և թէ քաղաքական մարմին, պիտոյ է որ ունե-

698-2009
(54 4)
(41733 4)

նոյ ազգային այլ և այլ անդամոց առ միմեանս միաբանական գործակցութիւն և յարաբերութիւններ, որով և կարող լինի ազգային լրութեանը օրն ամէն մէկ բաժանեալ մասերը զարդացնել և զօրացուցանել, մարդկութեան կատարեալ նպատակին համեմատ։ Ուրեմն մեր Էխալցիոյ ծանծաղամիտ և ապաշնորհ երիտասարդներն, որ պորպոռալով, մեծամտելով, և իրենց շահասիրական նպատակներն ու փորերնուն ցաւերը խորամանկութեան մէջ ծածկելով, խաղաղութեան, սիրոյ, և միաբանութեան գործը թողուցած մինչև ցայսօր լրագիրներու էջեր կը մրոտեն, արատաւորելով Ազգի անունն և պատիւը։ և չափազանցօրէն վէրքեր դնելով նորա սրտին, սուտը ճշմարիտ, ճշմարիտը սուտ, իրաւացին անիրաւացիի, անիրաւացին իրաւացիի տեղ առնելով և հրատարակելով։ որպէս զի, այս կամ այն ժլատ, գծծի և աղտեղասէր ազգային հաճոյ ըլլան, և տգէտ ռամկէն գովուին ու խնկարկուին։ որ է գործ քանգողը, քակողը, կործանողը ու կլանողը ազգասիրի, քան թէ շինող և վերականգնող առաքինաց և հայրենասիրի։ մի՞թէ աւելի



և աւելի անարգանաց և ծաղու արժանի չէ՞ն ըլլար այդպիսի սինլեքորներ և հացկատակներն։ մի՞թէ իրենք ևս իրենց ըրած այս ոճրագործութիւններէն և մոլեռանդութիւններէն վեր՝ ամաչելու, սոսկալու և զղջալու չէ՞ն, թէ ներկայիս և թէ հոգի ապագային մէջ, որ ազգին այնչափ գայթակղութիւն պատճառեցին ու կպատճառեն։ Չէ՞ր առջև բերուելու է, որ այս երկպառակութեան հոգին կվերնայ մէջերնէս, երբ մեր քաղաքի գլխաւորներն, եւելոք երկու անհատներ, իրենց անձնական շահը, իրենց հաճոյքը և հին ու նոր սիներն և վէճերն՝ եթէ ունին՝ մէկդի թողուն։ կամակորութեան, ատելութեան և վրէժխնդրութեան նիւթը իրենց սրտերնէն հանեն, մաքրեն և սրբեն, և միմեանց հետ ընտանենալով՝ միաբան գործակցութեամբ, և անենդ սրտիւ ըստ պահանջել հարկին, հասարակութեան այն էական խնդիրներն պարզաբանեն և բարեկարգեն իւր պիտոյից և ժամանակի պարագայից համեմատ։ և այնուհետև, անաչառապէս, հասարակաց ապահովութեանը, շինութեան և բարօրութեանը միտ դնեն։ հասարակութեան բա-

բեկամ լինին. ինչու որ առանց հասարա-
կութեան իրենք ոչինչ են. ազգային մար-
մին կազմողը և իրենց ամ ուժ և զօրու-
թիւն տուողն՝ հասարակութիւնն էր, և է.
և այն . . . . . : Ժողովրդեան իրա-
ւունքն չբռնաբարեն, նորա պատիւն ու
փառքը ոտնակոխ չանեն, նոցա բարոյական
և մտաւորական երջանկացուցիչ միջոցները
ջղակոտոր չանեն, և ինքնակոչ ու անբը-
դայացեալ գլխով՝ դեռ ազգին մէկ ծա-
ռայութիւն մը չբրած, ազգային և մարդ-
կային պարտք մը չկատարած՝ հասարակու-
թեան վերայ տէր և իշխան ըլլալ, բռնա-
նալ և փքանալ չախորժեն, և զանիկ
իրենց կորստական շահերուն և անիրաւու-
թեանց գործիք առնելով՝ իրենց զուեհկու-
թեան տակ՝ նուաճել չձգնեն:

Երիտասարդաց կողմէն, ասս մէկ պա-
տասխանս ալ տալու եմք, թէ յիրաւի,
թէպէտև ժողովրդեան իրաւունքը, պարտ-
քը, կարիքը և պատիւն ու շահը և բա-
րոյականութիւնը ճանաչող երիտասարդներ,
ժողովրդեան թերութիւններն և պակասու-
թիւնքը և բարոյական ախտերը ծածկելու
չեն, ուակից վատութիւն կծնանի և մեծ վը-



նաս կհասնի ազգին. տակայն, ախտ ալ կայ՝
որ աւելի արժանաւոր է ծածկել, քան թէ
հրապարակ հանել. ինչպէս իմաստասէրն
Սողոմոն սահման կդնէ ասելով՝ «զզարշե-
լիսն ծածկել քան յայտնել իմաստութիւն
վարկցուք:» Պիտի պիտանէր ապաքէն ա-
մէնքս ալ, որ մարդս ճշմարտութիւն խո-
սելու համար ևս ունի իւր համար կանոն և
սահման:

Ըզիտեմք, թէ մեր այս քանի մի տող
բառերը բարեկիրթ, լուսաւորեալ և առա-
քինի մարդկանց զգացմանց մէջ տպաւո-
րութիւն և ազդեցութիւն պիտի ունենան,
թէ ոչ. բայց թող չկարծէ մէկը, թէ տը-
գիտութեան խորխորատին մէջ գայրոյթն
և դժգոհութիւننին, զեռ յետ թողնել ձե-
ռընհաս ըլլան կենարար վարդապետին Յի-
սուսի այս սերմերն իւրեանց սրտի մէջ ևս
սերմանելէն, թէ՝ «Ամենայն թագաւորու-
թիւն և տուն բաժանեալ յանձն՝ կործանի
և աւերի.» Դուք ևս, ով աղնիւ և իմաստուն,
արդարակորով և բարեպաշտ Հայրենակից-ք
իմ՝ արիք, եկէք լինք հետ Աւետարանի
խաչը շալակած, և նորա կենագործող գը-
ծոշակին վերայ Ամմանուէլի այս յաւիտե-

նական անմահ վերտառութիւնն գրելով, թէ՝ «Ամենայն թագաւորութիւն և տուն բաժանեալ յանձն՝ կործանի և աւերի»՝ գնամք, ոչ թէ ի հին Դողգոթայ, այլ ի նորն խաչատեղն, այս ինքն է Պարապետեան վարժարանն, ուր կարծես թէ հազարաւոր գլուխներէ ջոկուած և ընտրած նորա մեծանուն հիմնադիրն, երջանկայիշատակ ի տէր հանգուցեալ Պարապետ Ամբեպիսկոպոսն, իւր գերեկմանէն յարութիւն առած, գաւազան ի ձեռին իւր Դպրոցի բազմագութ ՝օր մը պէս՝ մեր դէմը կանգնած՝ իսէր և իմիութիւն կյորդորէ ըզմեզ, կրակափայլ արծուի աչքերով՝ իւր կորովամտութեամբն և արիութեամբ ներկայ և ապագայ չարեաց և կողմնակցութեանց աղետալի հետևանաց վրայ խորհրդածելով, և զմեզ ի թշուառութենէ և տգիտութեան նախատինքներէն մեր նախկին բարբարութեան, բարբարատութեան, պատուոյն և փառացն ու պարծանաց մէջ բերել ուզելով։ Ամեզարդ ծերունին, որ ձեզ համար ոչ արիւն խնայած էր, ոչ քրտինք և վաստակ, և այս օրուան օրս ալ մեծագումար դպրոցի մը տէր և ժառանգ



ըրաւ զմեզ իւր քրտինքովն և ծոցէն ելած գումարներով, հրաւէր կը կարդայ մեզ, Աւետարան և խաչ ի ձեռին, որ թողնենք, մեր հին և նոր ոխերնիս, մոլորութիւններն և ատելի կիրքերնիս, միաբանական սիրով համախմբեալ իւր Դպրոցի ծոցը, նորա օգտին և յառաջադիմութեան հետևեմք ամենքս, և զանիկ բարեկարգելու տքնիմք. և զոր ինչ քար ալ որ ձգած եմք միմեանց դէմ ժողովիմք ի մի, կամաւոր հնազանդութեամբ, արդարասիրութեամբ և մարդկավայել քաղաքավարութեամբ, վայրենութիւնն ու բրտութիւնը՝ և ի վեր քան զամենայն եսականութիւնն՝ և նորա ժանտախտն ու թանձր ժահահոտութիւնն՝ որ տղայամիտներուն և տգէտ ռամկին ապշութիւնն ու զարմանքն կյաւելացուցանէ, և այնքան արժէք ունի, որ տգէտներէն միայն կրնայ պաշտպանուիլ, մեք իմաստութեան և առողջ բանականութեան լուսով՝ զանիկ հալածեմք. և մի անգամ՝ զոնէ, աչքերնուս առաջև ենչող մեր բարերարին տխուր և ցաւագին շիրի մէն պատկառիմք, որ զգայուն սիրտ ունեցողի մը, մանաւանդ ազգայնոյ մը, մեծ կիրք, մեծ ցաւ, ու մեծ

գործ է՝ մինչ կտեսնայ հոգեւորապէս ու կերեւակայէ, որ յաւիտենական իւր խորհնդմանէն իբրու թէ կենդանացած, իւր երկնաւոր հանդիսան, երկնային աներեկ քունը և քաղցրութիւնը թողուցած, ելեր, եկեր իւր արտասուաց հետ ալ կենդանոր-ծող և փրկարար առաջարկութիւններ կա-նէ իւր սիրելի ու ցանկալի ժողովրդեան, և կյորդորէ իսէր և ի միաբա-նութիւն, կրկնելով Յիսուսի անասուտ վճիռը, թէ ,,Ամենայն թագաւորութիւն և տուն բաժանեալ յանձն՝ կործանի և աւե-րի։,, Դիտցէք ուրեմն, որ ննջող նոր Ս՝ա-կաբէին, այս ինքն՝ նոյն հանգուցելոյն դե-ղեցմանը և կրողքէ իրաւանց և արդա-րութեան անաչառ դատաւորի յաւիտենա-կան դատաստանին ի դատապարտութիւն անիրաւաց։

Այսուհետև ժողովրդեան հասարակական իրաւունքն՝ ոչ ինձէն, և ոչ քեզանից կա-խում պիտի չունենայ, և ոչ մեկին ուչա-ռութեամբն կամ ըստ հաճոյից անձին գը-նալովն մեր քմից համեմատ՝ իւր իրաւուն-քին և պարտք՝ ինչպէս և խիղճն արա-տաւորելու է, և ոչ ալ ակամայ հնազան-



դել պարտաւոր է, այնպիսի մոլեռանդն կրից և տգիտութիւններու։

Այս կէտիս վերայ՝ թէպէտ կան մեր քաղաքի մէջ՝ մի քանի կարող անձինք, որոնք ծածկաբար և սաստիկ խորամանկու-թեամբ բռնաւորի գործ կը գործեն, ճնշե-լով մեր հասարակութեան չքաւոր մասին, որով և շատերն ակամայ նոցա հաճոյիցը հնազանդելոց են, և կհնազանդին մինչև ցայսօր։ բայց այնպիսի անկատարելութիւն-ներ և թենեշութիւններ՝ այնպիսի աղտե-զասէր հարուստներէ կամ աղաներէ, այ-սուհետև թող չսպասէ մէկը, որովհետև եթէ մեղանչած ալ էին իբրև մարդ, ամենքս ալ՝ այս ինքն, թէ հարուստ, թէ աղքատ, ուսումնական, թէ անուսում, կրթեալ, թէ անկիրթ, Կաթողիկոս, թէ թագաւոր, արդէն սխալական են, հանդերձ մարդկային բոլոր կարողութեամբք և յատ-կութիւններով։ իսկ անբաղդաբար, եթէ բոլորովին մոլութեանց գերի ըլլալ ուզելով՝ գարձեալ ապօրինաւոր վարքով, տգիտու-թեան հոլովով, և հիմակուան պէս իրենց հաճոյքն խնդրեն, և եսականութիւն յա-ռաջ բերին, և բռնանալ ու փքանալ կա-

յուսով եմ, որ միաբանութեան և սիրոյ, առաքինութեան և ճշմարտութեան բարեկամներն, շողոքորթութեամբ այլ չպիտի խնկարկեն այնպիսեաց, այլ չպիտի պաշտպանութիւն գտնեն նոյնպէս և ի մէնջ. այն ժամանակը բացարձակ կերևի, որ նոքա քակող են, քանդիչ և աւերիչ. և եթէ որ այսօր իմ տունս, կամ իմ օրդոյն և բարեկամիս տունը, վաղը և միւս օրն ալ քու տունդ, քու որդոյդ, քու բարեկամիդ և եղբօրդ տունն ալ կփլուցանեն, նրժանապէս և ազգային տուներնին. և յայնժամ՝ իբրև Ազգային միաբանութեան թշնամի, և մի անորոշ, բիրտ, խենէշ և նեխեալ անդամ, ժողովուրդը չի ճանչնար զիրենք, և յաւիտենական ատելի նախատինքն ու ամօթը կըլլայ իրենց ճակատագիր:

Եւ ի վերայ այսր ամենայնի, երիտասարդաց ևս պէտք է յայտնել, որ իրենց ըրածն և խօսածն ու գրածն ևս վտանգաւոր եղած է տակաւին մեր Էխալցիոյ Հայ ժողովրդեան բարօրութեանն, և ընտանեկան ներքին միաբանութեան և խաղաղութեանը, ինչպէս բազմաձեայ փորձով ևս ապացուցեալ է, որ իրենց, իբրու թէ ի-



տան դատարկաբանութեամբն և ժանտաբարոյ ըրտութիւններովն և նենգժողովութեամբ, առատել խռովութեան և ատելութեան՝ քան թէ օգտակարութեան, սիրոյ և միաբանութեան պատճառ եղեր են. և այս իմ առածն այնպէս մի պարզ ճշմարտութիւն է, որ ամեն մարդ իրեն սեփական աչքը և ուղեղովը ակնյանդիման կտեսնոյ, ու կհաստատէ. և իրենցմէ ոչ մէկն ալ, Ազգասիրութեան համար դպրոցներու շեմէն քայլ մը անգամ ներս մտնել չախորժեր, եթէ իրենց նպատակներն մի միայն իրենց քաղցած փորերը կշտացնելն, ու բրտուճներն եղոտելը չլինիր:

Դուք, իմ ազնիւ և սիրելի երիտասարդներ, եթէ ճշմարիտ և անմենգ սրտիւ և հոգւով ազգասիրութեան և քաղաքականութեան ասպարիզի մէջ մտնելու, և ժողովրդեան վիճակին, ինչպէս և Կարապետեան ու Լազիսարեթեան դպրոցների վիճակը աւելի արդիւնաւորելու միտք, յօժարութիւն և ցանկութիւն ունիք, ձեր առաջին պարտքն է, նախ ձեր վիճակն և կարիքն հոգալ, ու ձեր բարոյական և բնական ծայրագոյն խեղճութիւնը ապահով-

պա ազգային մարմնոյն և հոգւոյն մէջ մտնել. ուստի ամենևին չէ կարելի, մեր ժողովրդեան թէ թշուառութիւնն, թէ բարբարութիւնն, թէ բախտն և թէ անբաղդութիւնն ձեզ նման երիտասարդաց քմացը հաւասալ և հնճոյիցը յանձնել ու հրնազանդեցնել, քանի՞ որ ձեր ամենուն ժանտաբարոյութիւնն և մերկիմտասակութիւններն գիտէ ժողովուրդը, և մեզ ևս յայտնի է, թէ և դուք, ձեր ներքինը ծածկած՝ արտաքին գոյներով ներկուած՝ այսօր, մէկիս կարմիր, կանաչ կերևնաք. վաղը միւսին, դեղին և կապոյտ. միւս օրն ալ սպիտակ և սեաւ, և այսպէս միշտ ենթակայ էք գոյնափոխութեան. իմ հացս կուտէք, ինձ՝ «կեցցես տէր,» կանչելով երկինք կբարձրացունէք. ու միւս օրն ալ՝ յանկարծ լրագրին մէկ անկիւնը կը գրնամ զիս. միւսին գինին և խորտիկն վայելելով, և հետն ընկերանալով, հարսանիքին գնալով, նրան ևս «ողջ լեր, ազգասէր, Հայոց ազգի պարծանքն ու փառքը» ասելով, և գլուխը եղելով աթոռն ինչուան երկնքի ամպերէն ալ անդին կհասուցանէք. ուրեմն, տուանց ձեր անունն տալու, և ա-



կարող է վկայել և խոստովանիլ, որ դուք դեռ ևս ոչ կատարելութեան և գլխի տէր եղած էք, և ոչ ճշմարտութիւնն ժառանգել կարող էք, վասն զի ձեր ծառայութիւնն՝ ձեր քաղցած, ագահ, յափշտակող և աշխարհասէր որկորներուն և ախտերուն համար է. դուք առիւծին մորթը միայն ունեցողներէն էք. առիւծին ուժը և յատկութիւնը չունիք, այս ինքն՝ ազգասիրութեան լոկ անունն կրողն էք, ճշմարիտ և բուն ազգասէրներէն չէք. դուք այդպիսի կեղծ ու պատիր և խաբեբայական միջոցներով մի միայն ձեր մարմնական պիտոյքը, ձեր նիւթականը կմտմտաք, և կոկոսալով, կաչաղելով ասդիս անդին ինկած՝ երկպառակութիւն կսերմանէք. ձեր միտքը դեռ ողջայ է մնացած. դեռ ևս լոյս և կատարելութիւն չունենալով՝ չունի և կարողութիւն ոչ իր մարդկային պարտքն և իրաւունքն ճշդիւ և սրբութեամբ գիտնալու և կատարելու, ոչ անցեալն քննելու զօրութիւն, ոչ ներկայն պարզութեամբ որոշելու, և ոչ ապագայն հեռատեսութեամբ գուշակելու, այլ ձեր տեսութիւնն, ձեր տներուն պատերէն անդին չեն անցներ. այս է ատա-

քան կամիք՝ ձեր արժէքն և գործունէութիւնն բարձրացուցէք. ձեր ճակատագիրն այս է, եթէ այսուհետև դուք ևս չուզուիք և մարդավարութիւն և կատարելութիւնն չունենաք։ Ձէ՛ որ ասացի, թէ երկար ժամանակէ իվեր՝ դիտակն աչքերուս դրած կդիտէի. և ահա՛, այս օրինակ կերպարանեալներու հրէշներն, պատկերներն և գազափարներն հաղիւ իմն կրցայ ըմբռնել, որոց հեշտ և ընդարձակագոյն նկարագիրներն յանկանէ յանուանէ չեմք ուզեր խպատիւ մեր ազգայնութեան հրապարակ հանել, այլ կթողումք մշտնջենաւոր լռութեան մէջ, եթէ իրենք իրենցմէ իւրեանց ոգիտութիւններովն և ապօրինաւոր ընթացքներով զմեզ չատիպեն և չհարկեն. բայց իրենց զգուշութեան և իմաստութեան խրատ մը կուտամք, որ ասկէ ետք՝ մեր ժողովուրդն չպախարակեն, չբռնադատեն, չբամբասեն, չզրպարտեն, և վերջապէս չհայհոյեն, որ ընդ դէմ է արդարութեան, խղճի, կարեկցութեան և իմաստութեան օրինաց, ինչու որ վերաւորին վերքին վերայ նորէն վերք դնելով՝ զայն չի բժշկուիր, խորխորատն կամ ցեխն իյնող



լով, ճրճրալով՝ օգուտ մը չեմք կարող անել, ինչուան տեսնողն ով որ է ինքն անձամբ չերթայ նրան չմօտենայ ու չիրկէ. և կամ իւր հետ այլ փրկողներ չգտնայ. հիւանդն՝ անարդելով, հայհոյելով և չարչարելով՝ չառողջանար, իւր հիւանդութենէն չազատուիր. և վերջապէս, մենք վեհանձնութիւնն պահելով, և մեր ժողովրդեան կըրած տառապանաց ու վշտաց ցաւակից ըլլալով, և շրջահայեացն նկատողութեամբ ներկայ և ապագայ չարեաց կանխատես ըլլալով՝ ի սէր և ի միաբանութիւն կյորդորեմք մեր հասարակութիւնը, ուսկից միայն և եթէ սպասելու է ազգերնիս լաւագոյն օրեր և բարեշուք վիճակ. իսկ անոնք ալ, որոնք մեր քարոզած սիրոյն դէմ՝ ատելութիւն և վրէժխնդրութիւն, միաբանութեան դէմ՝ անմիաբանութիւն և երկպառակութիւն դիմադրեն, յոյսս հաստատուն է, որ նորա ևս աւետարանի այս յաւիտենական վսեմ բանը միտ բերելով, որ ազգայնութեան հիմն ու խարիսխն եղած է, թէ՝ «Ընդհանրական թագաւորութիւն և տուն բաժանեալ յանձն՝ կործանի», աւելի երկիւղով և ամօթով ետ դառնան իրենց

անդնդախոր ճանապարհէն, և տրամադրելով, որ այնուհետև կենարարին այս խօսքին իբրև աստուածախառն կայծակ մը, հուր և ծծումբ, անտարակոյս կթափի իրենց գլխնուն յաղագէ ազգ մինչև ցեօթն պորտ, և իբրև աստուածադիր լեռնաքար մի կճնշէ, կփշրէ, կկործանէ զնրենք անկանգնելի, ու կկորչին մինչ յաւիտեան:

Մեք, մեր այս սիրոյ և միաբանութեան դոյզն հրաւէրը կնքելով կսպասեմք փափագանօք, թէ ո՞վ արդեօք օր մը յառաջ, յասպարէզ կիջնայ, ու մեր աւետարանական միաբանութեան և սիրոյ անմահ դաշնագիրն կողջունէ ու կընդունի, և նորա գործադրութեան վերայ կաշխատի ու քրտինք կը թափէ, գիտնալով որ իւր թափած քրտինքն ի սէր ազգի և միութեան, այս կենդանի երկրին՝ ո՛չ թէ անիրաւութեան՝ այլ արդարութեան և ճշմարտասիրութեան պարարտ ակօսներու մէջ թափուելով, մեր թշուառ Հայոց ազգի սերնդեան այս ապաբաղդ որդւոց անթաղ, անպսակ գլխնուն՝ բարոյական մարգարտաղարդ թագ մը կը ձևանայ գեղասանձ, լուսասանձ:

Ի ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՈՍՏԻՒՄՆԱՐԱՆՆ ԵՒ ՈՐԴՒ ՏԱՆԱԼՅԱՆ.
1874. [illegible]

ՀՀ Ազգային գրադարան
NL0159898